56

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի տնօրեն,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝
Լ. Ա. Ղազանչյան

14.10.2020թ.

Կարծիք

Առաջատար կազմակերպության
Ոյաբովա Տատյանա Վլադիմիրի
«Սահմանադրական արդարադատությունը որպես քաղաքացիների ազատությունների դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման միջոց /Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրինակով/ թեմայով ԺԲ .00.02 - Հանրային իրավունք- Սահմանադրական, Վարչական, Ֆինանսական, Մունիցիպալ, Բնապահպանական, Եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական արդարադատության խնդիրներին՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության և պրակտիկայի համատեքստում:

Հենց սկզբից նշենք, որ ցանկացած աշխատության հաջողությունը մեծամասամբ պայմանավորված է նրա ճիշտ կառուցվածքով: Այս առումով նկատենք որ գրախոսվող աշխատանքն ունի կուռ տրամաբանական կառուցվածք՝ ներածություն, երեք գլուխ, որոնք ներառում են ութ ենթագլուխ, ամփոփում և օգտագործված գրականության ցանկ:

Ներածական մասում հեղինակը հիմնավորում է թեմայի հետազոտության արդյականությունը, ներկայացնում է թեմայի ուսումնասիրության վիճակը, գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը հանգամանորեն քննարկում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության տեսական և պատմական հիմունքները՝ Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը իրավահամեմատական մեթոդի շնորհիվ բացահայտում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության առանձնահատկությունները Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը լուսաբանում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հիմնահարցերը սահմանադրական արդարադատության ոլորտում:

Ամփոփման մեջ հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը ձևավորել է իր եզրահանգումները և հետևությունները, որոնք ունեն տեսական և գործնական նշանակություն:

Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը պատշաճ գիտական խորությամբ է ուսումնասիրել թեմային վերաբերող մասնագիտական գրականությունը և նորմատիվ նյութը, ինչը ապահովվել է աշխատանքի օբեկտիվությունը և ստացված արդյունքների հիմնավորվածությունը:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին՝ հետազոտության թեմայի վերաբերյալ բուն հիմնախնդիրը, ըստ էության, քննարկված է աշխատանքի 3-րդ գլխում, այսինքն՝ քննարկվող թեմայի հարցերը ուղղակիորեն լուսաբանված են աշխատանքի 1/3-րդ մասով, իսկ 2/3-ը ընդհանուր դատողություններ են մարդու իրավունքների դատական պաշտպանության մասին: Չնայած, որ 2-րդ գլխում ընդհանուր գծերով խոսվում է նաև սահմանադրական արդարադատության մասին:

Երկրորդ՝ քանի որ հետազոտության թեման Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների իրավունքների պաշտպանության և սահմանադրական արդարադատության արդյունավետ մեխանիզմների ապահովվումն է, ապա ենթադրվում էր իրավահամեմատական վերլուծություն կատարել այդ ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, ցույց տալ դրական և բացասական կողմերը և հանգել կոնկրետ առաջարկությունների:

Մինչդեռ հեղինակը պարզապես նկարագրում է իրերի վիճակը ՌԴ-ում և ՀՀ-ում և դրանով ավարտված համարում իր առաքելությունը:

Երրորդ՝ հայկական մասով խիստ սակավաթիվ են կոնկրետ պրակտիկ օրինակները, այդ թվում ժամանակակից իրավակիրառ պրակտիկայի նյութերը:

Սակայն նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ և բնավ չեն կարող ազդել ատենախոսական աշխատանքի դրական գնահատականի վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացված պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակած գիտական հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Հետազոտության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

<u>Հետևություն՝</u> Ռյաբովա Տատյանա Վլադիմիրի <<Սահմանադրական արդարադատությունը որպես քաղաքացիների ազատությունների դատական պաշտպանության առդյունաբերության բարձրագույն միջոց /Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրինակով/>> թեմայով ատենախոսությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն և ամբողջական ուսումնասիրություն, որը ներառում է սահմանադրական իրավունքի օրենսդրության և պրակտիկայի համար էական նշանակություն ունեցող հիմնախնդրիների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված մոտեցումներ և լուծումներ: Իսկ հետազոտության արդյունքները սահմանադրական իրավունքի տեսանկյունից ունեն զգալի տեսական և գործնական նշանակություն:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ռյաբովա Տատյանա Վլադիմիրի <<Սահմանադրական արդարադատությունը որպես քաղաքացիների ազատությունների դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման

միջոց /Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրինակով/ թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 <<Հանրային իրավունք >> մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2020 թ-ի հոկտեմբերի 13-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ.Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ, իրավաբանական գիտությունների թեկնածուներ Ա.Վ. Շուքուրյանը, Ա.Ա.Աբրահամյանը, Բ.Վ.Ղազինյանը և Լ.Ա. Ղազանչյանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հ. Մ. Ստեփանյան